

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1923

16

2

F-20

(134)

ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԻ ԵՒ ՈՒՍՄԱՆ ԳԻՐԳ

STORIES FROM THE OLDEN TIME

JOSEPHINE BALDWIN

ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՐՏՍԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ

Ա. ՏԱՐԻ—ՄԱՍՆ Ա.



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼՍ

1923

2
0-20

2010

ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԿԶԲՆԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՐԵՔ ՆԱՀԱՊԵՏՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԲ. ԳԻՐՔԷՆ ԿԱՐԴԱՑ ՈՒ ՔԱՂԵՑ

Անուն

Եկեղեցի

Քաղաք

Թուական

48891-ահ



34685-65

ԽՕՍՔ ՄԸ ԳՐՔՈՅԿԻՍ ՎՐԱՅ

Միլիտանտոր զիրքեր կան աշխարհի վրայ: Բայց զիրք մը կայ որ ամեն ուրիշներէ մեծ է, և այդ ամենէն մեծ ու սքանչելի զիրքը Սուրբ Գիրքն է:

ՄԵՐ ԴԱՍԱԳԻՐԷ

Արդէն իսկ զիտէք այդ զիրքին գեղեցիկ պատմութիւններէն շատերը, վասն զի ձեզի պատմուած են: Բայց հիմա այնչափ մեծցած էք որ կրնաք անձամբ կարդալ զանոնք և անձամբ շօշափել ու պարտել Գիրքը որու մէջ կը գտնուին անոնք:

Բայց ի Սուրբ Գիրքէն և այս զբարոյիչն, որ ձեզի ուղեցոյց պիտի ըլլայ ձեր ուսումնասիրութեան մէջ, պէտք է որ ունենաք զբիշ, մեղան, մկրատ և ստիճ: Մտախ կրնաք անշուշտ գործածել ձեր զրաւոր աշխատութեան մէջ: Բայց որովհետև այս զիրքը տարեկան քննութեան տակն կիրակնօրեայ դպրոցի ցուցադրութիւններուն մտապիտի կազմէ, և որովհետև յետոյ պիտի ուղէք պահել զայն ձեր զրատան մէջ, կ'արժէ որ մեղանով գրէք:

ՀԱՐԱՆՈՐ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Սուրբ Գիրքը զիրքերու կը բաժնուի, իւրաքանչիւր զիրք գլուխներու և իւրաքանչիւր գլուխ ալ համարներու: Սուրբ Գիրքն արդէն տարբեր տարբեր զիրքերէ կը բաղկանայ: Ստիպան յետոյ գլուխներու և համարներու ալ բաժնուած է, որպէս զի զիրքին ըլլայ շուտով սեւէ պատմութիւն կամ սեւէ խօսք գտնել անոր մէջ: Սուրբ Գիրքը գործածել սորվելու համար էական առաջին բաներէն մին է ցուցումներ կամ վկայութիւններ գտնել: Օրինակի համար, անաւասիկ ցուցում մը. Ծննդոց Ա. 1: Առաջին բառը զիրքին անունն է, յաջորդ գլխու զիր այդ զիրք կը ցուցնէ ուղուած գլուխին թիւը, յաջորդ թուանշանն ալ նոյն գլխուն մէջ ուղուած համարը: Ըսել է թէ այս ցուցումով կամ վկայութեամբ կ'ուզուի Ծննդոց զիրքին առաջին գլխուն առաջին համարը: Ղուկ. Բ. 8 — 20:

ՀԱՍՏԱՐՆԵՐ ԳՏՆԵԼ ՍՈՒՐԸ ԳԻՐՔՆԵՐ ՄԷՋ

Բրիտանոսի Ծննդեան պատմութեան յատուկ վկայութիւնն է այս և կը նշանակէ գտնել Նոր կատարանի երրորդ զիրքը, երկրորդ գլուխը, և ութերորդ համարէն սկսեալ կարդալ մինչև քսաներորդին վերջը: Այսպէս երբ երկու թուանշաններու միջև փոքր զիծ մը տեսնէք, պիտի հասկնաք թէ կարդալու էք ոչ միայն երկու համարները, այլ նաև ինչ որ կայ անոնց միջև: Եթէ

ստուէս գրուի, Ղուկ. Բ. 8, 20, կը նշանակէ թէ պէտք է որ կարդաք Տրդ համարը և 20րդը միայն:

Մինչև որ Սուրբ Գիրքին զիրքերուն անունները կարգաւ սորվէք, մ'ը տան որ Ծննդոց զիրքէն տարբեր զիրքէ խօսք մը ուղուի, զիրքերուն ցանկը նայեցէք, ուղուած զիրքը գտէք և զիտեցէք թիւն էջին ուր կ'սկսի այն, և զիւրու կը բանաք: Ատուածաշունչներէն ոմանց մէջ բոլոր զիրքերուն անունները կը գտնուին Ծննդոց զիրքին առաջին էջին զիմացի էջին վրայ, ոմանց մէջ ալ միայն Հին կատարանի զիրքերուն անունները, իսկ Նոր կատարանի զիրքերուն անունները կը գրուին Մատթէոսի Աւետարանին առաջին գլխուն զիմացի էջին վրայ:

Երբեմն համարին միայն մէկ մասը կ'ուղուի: Այն ժամանակ եթէ առաջին մասն է որ կ'ուղուի, «ա» զիրք կը գրուի համարէն ետքը, ինչպէս Ա. Կորնթոցի ժԳ. 4ա: Եթէ երկրորդ մասն է որ կ'ուղուի, «բ» զիրք կը գրուի: Եթէ առաջին և վերջին մասը կ'ուղուի՝ միջինը թողով, «ա, գ,» զիրքը կը գրուին, ինչպէս Երբայեցիս ժԱ. 8ա, գ:

Այս զիրքը չլինար, մինչև որ ձեր գործը չկատարէք անոր մէջ: Պատկերաթիւթին վրայ պատկերներ կան, որոնցմով պիտի պատկերադարձուի այս: Բայց ի՞նչպէս կրնայ պատկերադարձուիլ, եթէ պատկերները կարելով չհանէք և չհաստատէք ուր որ պէտք է հաստատել: Շատ սեղ բառեր գտնց աւ

ԱՅՍ ԳԻՐՔՆ ԱՄՐԱՂՂ ԶԱՅՆԵԼ

նուած են գորս դուք պէտք է հայթայթէք: Գրելու, կարելու և փակցնելու գործը ամենէն կոկիկ կերպով ըրէք: Ատուածոյ Խօսքն է որ կ'ուսանիք: Պէտք է որ ամենամեծ խնամով և ուշադրութեամբ գործէք: Եւ գործն ընելու էք կիրակնօրեայ դպրոցի դասին աւարտելէն ետև: Կառապայն գործողն ան պիտի ըլլայ որ ճշտիւ կ'ընէ ինչ որ զիրքը կը պատուիրէ ընել ամէն օր: Գործը լաւ պիտի ըլլայ, եթէ պահանջուածէն աւելի արագ կամ աւելի կամայ կատարուի: Պիտի ուրախանաք այս գործն ընելով և լաւ ընելով, վասն զի եթէ երեք զիրք լինցնէք գոհացուցիկ կերպով, վերի կարգը պիտի փոխադրուիք: Իսկ եթէ չարրորդ զիրքը լինցնէք, պատիւ կը չահիք: Ուրիշ պատիւ մը նաև կը չահիք, եթէ պահանջուած Ոսկեղէն համարներուն հետ սորվիք նաև թերադրուած ինչ ինչ համարներ և հոգեւոր կրգեր:

Դաս Ա. — ՍԿԻԶԲԵՆ

Բան մը այն գիրքին վրայ ուր կը գտնուի այս պատմութիւնը

Աստուածաշունչը մէկ գիրքը չէ միայն, այլ . . . գիրքերու խումբ:

Կը բաժնուի . . . մասերու որ կը կոչուին . . . Կտակարան և . . .

Կտակարան:

Հին Կտակարանին առաջին գիրքը կը կոչուի . . . և կը նշանակէ «Սկիզբներ կամ Սկզբնաւորութիւններ»:

ՁԵՐ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Երկու շաբթի

Վերի խօսքերն ամբողջացուցէ՛ք՝ պակասած բառերը տեղը դնելով կամ գրելով:

Երեք շաբթի

Ուշագրութեամբ կարդացէ՛ք Ծննդոց Ա. 1 համարը երեք անգամ: Ապա գիրքը գոցելով բտէ՛ք զայն:

Չորեք շաբթի

Կատարեալ սորվեցէ՛ք Ծննդոց Ա. 1 համարը, ուշադիր ըլլալով բառերուն ուղղագրութեան: Յետոյ թուղթի վրայ գրեցէ՛ք և գիրքը բանալով նայեցէ՛ք թէ ուղի՞ւ է այդ գրուածը:

Հինգ շաբթի

Կարդացէ՛ք Ծննդոց Ա. 1-5:

Ուրբաթ

Զգուշութեամբ կարեցէ՛ք այս դասին առաջին պատկերը և փակցուցէ՛ք դիմացի էջին վրայ իր յատուկ տեղը: Կարեցէ՛ք միւս հինգ պատկերներն ալ և փակցուցէ՛ք իրենց տեղերը:

Շաբաթ


Կարդացէ՛ք Ծննդոց Ա. 3-5, և գտէ՛ք երկու բառերը որ ձեզի պէտք են առաջին պատկերը բացատրելու համար: Գրեցէ՛ք զանոնք պատկերին տակ զանուող սողին վրայ:

Կիրակի


Ոսկիդէն համարը, Ծննդոց Ա. 1, գրեցէ՛ք պատկերներուն միջև զանուող սողերուն վրայ:

ԱՇԽԱՐՀԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Այս պատմութիւնը կը գտնուի Ծննդոց Ա. 1 կն մինչեւ Բ. 3:




1




4

Արև, Լուսին, Աստղեր




2




5

Թռչուններ, Սողուններ, Զուկեր



3

Հաստատութիւն



6

Ծննդոց Ա. 1

Երկիր, Ծով, Բուսականութիւն

Կենդանիներ, Մարդ

Դ ա ս Բ. — Ե Դ Ե Մ Ի Պ Ա Ր Տ Է Զ Ը

ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ. — Տէր Աստուած ասու մարդը, ու եղևի պարտեզին մէջ զրու, որպէս զի զանիկա գործէ ու պահէ: Ծ՛ննդոց Բ. 15:

ՋԵՐ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Երկուցաբքի

Եղևի պարտեզին մէջ երկու ծառի մասնաւոր անուն տրուեցաւ: Այդ անունները գտէք Ծ՛ննդոց Բ. 9ի մէջ:

Երեքաբքի

Քանի մը անգամ կարդացէք Ծ՛ննդոց Բ. 15 համարը եւ ապա նայեցէք թէ կրնա՞ք ըսել զայն առանց գիրքին վրայ նայելու:

Չորեքաբքի

Կարեցէք այս դասին պատկերը եւ դիմացի էջին վրայ փակցուցէք թուղթի վրայ գրեցէք անունը Աբ. Գրոց այն գիրքին, որու մէջ կը գտնուի ձեր դասը: Գրեցէք այդ անուան նշանակութիւնն ալ:

Հինգաբքի

Կարդացէք Ծ՛ննդոց Բ. 19, 20 համարները եւ տեսէք թէ պարտեզը խնամելէ զատ ուրիշ ի՞նչ գործ տրուեցաւ Ագամի:

Ուրբաք

Կարդացէք Եւայի ստեղծումը Ծ՛ննդոց Բ. 18, 21-25 համարներուն մէջ:

Շաբաք


Ծ՛ննդոց Բ. 16, 17 համարներուն մէջ կարդացէք պատուէրը զոր Աստուած Ագամի տուաւ:

Կիրակի

Յիշողութենէ գրեցէք թուղթի վրայ Ծ՛ննդոց Բ. 15 համարը եւ նայեցէք թէ բառերն ուղիղ հեղա՛ծ էք:

Ե Դ Ե Մ Ի Պ Ա Ր Տ Է Զ Ը

Այս պատմութիւնը կը գտնուի Ծ՛ննդոց Բ. 4-25ի մէջ:



Դաս Գ. — ՄԱՐԻԱՄԻ ԵՐԳԸ

Եւ Մարիամ ըսաւ, իմ անձս կը մեծցնէ Տէրը,
 եւ իմ հոգիս ուրախացաւ իմ Փրկիչ Աստուծովս:
 Ղուկ. Ա. 46,47:

ՁԵՐ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Երկուօրօր

Աբրահամ օր մը հրեշտակներ
 հիւրընկալեց առանց զխոնարու: Ղուկ.
 Ա. 26-28ի մէջ կարդացէք պատմու-
 թիւնը Նազովրեցի կոյսի մը, որու
 օր մը Աստուծմէ հրեշտակ մը եկաւ
 ամէնէն ուրախառիթ աւետիսը տալ:

Երեքօրօր

Երբ Մարիամ լսեց զարմանալի
 աւետիսը թէ Փրկիչը շուտով պիտի
 գայ, և թէ ինք անոր մայրը պիտի
 ըլլայ, շատ երջանիկ եղաւ: Կարդա-
 ցէք անոր ուրախութեան երգին մէկ
 մասը Ղուկ. Ա. 46-48ի մէջ:

Չորեքօրօր

Աորվեցէք Ղուկ. Ա. 46,47:

Հինգօրօր

Կարդացէք Ղուկ. Ա. 49,50:

Ուրբաթ

Կարդացէք Ղուկ. Ա. 51-53:

Շաբաթ


Աստուած Աբրահամու ըսաւ,
 «Բեզմով պիտի օրհնուին երկրի բո-
 լոր ազգերը:» Մարիամ Աստուծոյ
 պատգամը լսելէ ետեւ գիտցաւ թէ
 օրհնութեան խոստումը կը կատար-
 ուէր: Կարդացէք Ղուկ. Ա. 54,55:

Կիրակի

Կարդացէք գեղեցիկ պատմու-
 թիւնն այն գիշերուան, երբ խոս-
 տումն իրականացաւ: Ղուկ. Բ. 8-20:
 Կարդացէք զբոյսիս վերջը զրուած
 Ծննդեան Տօնի երգը և սորվեցէք,
 եթէ կրնաք:

ՄԱՐԻԱՄԻ ԵՐԳԸ

Այս պատմութիւնը կը գտնուի Ղուկ. Ա. 26-55 համարներուն մէջ:



ԵՐՋԱՆԻԿ ԾՆՈՒՆԴ ՄԸ

Փոքրիկ էր անալը, ուր Տիկին Արեգեան կը բնակէր իր երկու պըզ- ախիկներով: Եթէ կարենայիք իմօժմի իրիկուն մը ներս նայիլ անոր պատու- նանէն, պիտի տեսնէիք շատ խեղճ կարասիով սենեակ մը և ճաշասեղա- նին վրայ երեք գուլաթ կաթ միայն: Պզտիկները գեռ սեղան նստած չէին, և անա զարնուեցաւ դուռը: Ծանան փութաց բանալ զայն և երկու պըզ- ախիկներու հետ ներս մատու մարդ մը, որ այդ գիւղին մէջ վերջացող երկա- թուղիի գծի մը վարիչն էր: «Տիկին Արեգեան,» ըսաւ ան, «արդեօք կըր- նա՞ք այս գիշեր պոնկ սա աղաքը: Մեծ կայարանէն անոնք իմ գծիս վրայ փոխադրուած են, յայտնի է թէ սխալմամբ, վասն զի իրենց հօրեղոր, Պ. Ազատեանի, պիտի երթան և այդ անունով մարդ չկայ այս գիւղին մէջ: Կերեի թէ միւս գծով ճամբորդողէ մը խնդրուեր է ասոնց համար տոմսակ մը գնել, և մարդը գներ է մինչև մեր գիւղին համար, և անա խեղ- ճներ բացը կը մնան Ծնունդի գի- շերով: Չեր տունը կայարանին այնքան մօտ է և դուք այնքան բարի էք որ համարձակեցայ հոս բերել զանոնք, յուսարով թէ պիտի հաճիք մինչև վաղը պահել: Ես վաղը ժամը 10ին կու գամ և մեծ կայարանը կը վերա- դարձնեմ:»

«Հարկաւ, հարկաւ կը պահեմ,» պատասխանեց Տիկին Արեգեան, և մինչ ինք անոնց վերաբիւնները կը հանէր ու կը մխիթարէր հինգ տարե- կան Լորին որ կու բար, Ծանան և Լու- սիկ արագ և անչառկ այնպէս բաժ-

նեցին իրենց ճաշը որ հիւրերուն ալ բաժին կաւ:

Երբ ճաշն աւարտեցաւ և սեղանը մաքրուեցաւ, Տիկին Արեգեան կար- ծես բարձրաձայն խորհելով ըսաւ, «Հոս կրակին մօտ անկողին մը պատ- րաստեմ աղայոց համար:»

«Ոչ, մայր,» ըսաւ Ծանան, «ես գեախնը կը պոռկիմ, աղաքը թող ան- կողինս պահելին: Գիտես թէ գրեթէ սքառթի տարիք ունիմ և պէտք է որ չարքաշուեմ վարժուիմ:»

Այսպէս կարգադրուեցաւ և շատ չանցած՝ պզտիկները անկողին մէջ տեղաւորուեցան և խորունկ քնացան:

Յետոյ մայրը և Ծանան ու Լու- սիկ նստան խորհեցան թէ ի՞նչ ընեն սաւաւօտուն:»

«Չեմ գիտեր թէ ի՞նչպէս կրնամ վաղ սաւաւօտ առաջին գործս ընել ձեր նուէրներուն բաշխումը: Պիտի չու- գէիք անչուշտ որ միւս պզտիկները տեսնեն ձեր նուէրները, երբ իրենք ոչինչ ունին:»

«Բայց, մայր,» ըսաւ Լուսիկ, «չե՞նք կրնար միթէ անոնց ալ բաժին հանել մեր նուէրներէն:»

«Ինչո՞ւ չէ,» յարեց Ծանան:

«Կրնաս իմ նուէրներուս մէկը մանչուն տալ և Լուսիկի նուէրներէն մին ալ աղջկան:»

«Ոչ, չեմ ուզեր այդպէս ընել: Ասկէ զատ, չեն ալ յարմարիք: Եկէք, հիմա տամ ձեր նուէրները, և դուք որոշեցէք ինչ որ կ'ուզէք:»

Սիրով հաւանեցան աղաքը, և

նուէրները բերուեցան—ըսդ մը չմուշկ և գիրք մը Ծանանի համար և գիրք մը և սանձակ մը Լուսիկի համար: Տղաքը պատմութիւն շատ կը սիրէին, և որովհետև հանրային գրատուն չկար գիւղին մէջ, կարգաւ պատմութիւն չէին գտնուր դիւրաւ:

«Երկո՞ւ գիրք,» գոչեց Ծանան, «ս'ն, ի՞նչ աղէկ:»

«Գիտէի որ պիտի սիրէք,» ըսաւ Տիկին Արեգեան: «Սանձակն ու չը- մուշկները ձեր հօրեղորոքէն են, բայց գիրքերը ևս գնեցի հոս:»

«Ասոնց ոչ մէկը կրնանք Լորիի և Արշամի տալ,» ըսաւ Ծանան:

«Ոչ, բայց կրնանք գիրքերը փո- խել ուրիշ բոնի մը հետ,» թելադրեց Լուսիկ:

«Կեցցէ՛,» ըսաւ Ծանան և իսկոյն երկուքը մէկտեղ դէպ ի չուկայ վաղե- ցին: Ժամ մը յետոյ, որ շատ երկար թուեցաւ իրենց սպասող մօրը, վերա- դարձան իրենց գնումներով:

«Շատ ժամանակ անցաւ մինչև որ մեր սրտուսը տուէինք: Բայց մտա- ծէ, ի՞նչպէս պիտի փայլին մանչուն ծէ, ի՞նչպէս պիտի փայլին մանչուն աչքերը, երբ տեսնէ ասիկա,» ըսաւ Ծանան և ծրարին մէջէն հանեց շոգե- կառք մը և կասախուսեմ մը, որ յար- ուելով բաւական տեղ կ'երթար: Լու- սիկ աղաւթը պուսրիկ մը և խոշոր պատկերագիրք մը ունէր Լորիկի հո- մար: Տղայոց պոռկելէն ետքը Տիկին Արեգեան շաքար պատրաստեց և և չորս գիւղացորեն պայթեցուց, և չորս աղայոց գուլպաները լեցնելով փակեց մէյմէկ խնձորով ու նարինջով:

Հետեւեալ սաւաւօտ պզտիկ հիւրերն ուրախութեան աղաղակներ արձակե- ցին իրենց գուլպաները և խաղալիկ- ները տեսնելով, և Լուսիկ ու Ծանան

այնչափ ուրախացան Լորիի և Արշամի ուրախութեան համար որ գրեթէ մոտ- ցան իրենց նուէրները, մինչև որ Տի- կին Արեգեան Ծանանի թելադրեց չը- մուշկներն անել և աղաքը լծին վրայ պարտցնել սանձակով:

Վայրկեաններն արագ անցան և չուսով կաւախուեմքին ժամն հասաւ: Երբ Ծանան ու Լուսիկ հիւրերը ճամբու- ղնելով կայարանէն տուն վերադար- ձան, Լուսիկ ըսաւ. «Մայր, ինչո՞ւ այնչափ երջանիկ եմ այսօր: Հոգիս կ'ուզէ որ աղաղակեմ ու երգեմ միշտ:»

«Այո, ևս ալ աղաղէս կ'զգամ,» յարեց Ծանան, «երբեք այնչափ եր- ջանիկ Ծնունդ չէի անցուցած:»

«Կարծեմ,» ըսաւ մայրը, «պատ- ճառը սա է որ սակէ սառջ կրեք Յի- սուս ձեզի հիւր կղամ չէք, ինչպէս կղաւ այս տարի:»

«Ի՞նչ բնի կ'ուզես,» ըսին փու- թով երկու պզտիկները մէկտեղ, և նստան անոր ակոսին երկու կողմը:

«Գիտէք որ Տէր Յիսուս ըսաւ, «Որովհետև այս իմ կըրայրնե- րուս ամէնէն պզտիկներէն մէկուն ըրիք, ինձի ըրիք:» Երեկ գիշեր երկու պզտիկ միայն տեսանք որոնց կարն- տութիւնն էր գիշերուան համար օթե- ւան և քիչ մը Ծնունդեան ուրախու- թիւն: Բայց երբ ձեռքս և նուէ- րէն բաժին տուիք անոնց, իսկապէս տուիք ուղղակի Տէր Յիսուսի որու Ծնունդեան օրն է այսօր:»

«Ի՞նչ ուրախ եմ,» ըսաւ Ծանան մեղմով. «երանի թէ աւելի բոն ունենայի տալու:»

«Բուն անկողինդ տուիք,» յարեց Լուսիկ. «երանի թէ ևս ալ սաւած ըլլայի:»

Դ ա ս Դ. — ԱՍՏՈՒԾՄԷ ՊԱՀՈՒԻԼ

ՁԵՐ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Երկուցաբքի

Կարդացէք դարձեալ Ծննդոց Բ. 16,17ի մէջ այն պատուէրը, որ Ադամի արուեցաւ պարտէղին ծաւերէն մէկուն նկատմամբ:

Երեքաբքի

Կարդացէք Ծննդոց Գ. 1—3ը և նայեցէք թէ, ըստ Եւայի, պատուէրին մէջ ի՞նչ կայ որ չկայ երէկի ձեր կարդացած համարներուն մէջ:

Չորեքաբքի

Ծննդոց Գ. 4—6ի մէջ կարդացէք թէ ի՞նչպէս Եւա նախ նայեցաւ, ապա փափաքեցաւ, ապա դպաւ ու վերջապէս առաւ արգիլուած պտուղէն ու կերաւ: Ի՞նչ որ կը կարծէք թէ ան պարտէր ընել թուղթի վրայ գրեցէք ու գալ կիրակի կիրակնօրեայ դպրոց տարէք:

ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ.— Մէկը ծածուկ տեղեր կրնայ պահուիլ, որ ևս գանկա չտաննեմ, կ'ըսէ Տէրը: Երեմ. ԻԳ. 24ա:

Հինգաբքի

Գիտութիւնը որ եկաւ պարտէղին մէջ գործուած մեղքէն՝ հաճելի գիտութիւն մը չէր, այլ՝ սոփոթ, երկիւղ ու արտամութիւն միայն: Կարդացէք Ծննդոց Գ. 7,8:

Ուրբաք

Փակցուցէք դիմացի էջին պատկերը և սորվեցէք այս էջին ստորաը տպուած Ոսկեղէն Համարը:

Շաբաք


Կարդացէք Ծննդոց Գ. 9,10 համարները և պատկերին տակ գրեցէք անոր յատուկ պատմութիւնը պարունակող գլուխին ու համարին թիւը:

Կիրակի

Կարդացէք Ծննդոց Գ. 11-15:

ԱՍՏՈՒԾՄԷ ՊԱՀՈՒԻԼ

Այս պատմութիւնը կը գտնուի Ծննդոց Գ. 1-24 համարներուն մէջ:



Դաս Ե. — ԿԱՅԷՆ ԵՒ ՀԱԲԷԼ

ՋԵՐ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Երկուշաբթի

Փակցուցեք զիմացի էջին յատուկ պատկերը և կարգացեք Ծննդոց Դ. 3-5 համարները:

Երեքշաբթի

Կարգացեք Ծննդոց Դ. 6,7 համարները:

Չորեքշաբթի

Շատեր կը կարծեն թէ Ծննդոց Դ. 8ի առաջին նախադասութիւնն ըլլալու էր, « Կայէն իր Հարէլ եղբորն ըստ, Դաշտը երթանք: » Կարգացեք մնացեալ մասն ալ, որ կը պատմէ տնաւոր այն բանը զոր Կայէն ըրաւ՝ եղբորը նախանձկրուն համար:

Հինգշաբթի

Աստուածաշունչի զիրքերուն ցանկին մէջ նայեցեք և կը տեսնեք թէ նոր Կառկարանի եօթներորդ զիրքը Առաջին Թուղթ առ Կարնթացիս կը կոչուի: Գտեք այդ զիրքին ժ.Գ. դրուիը, կարգացեք և նշանակեցեք ձեր Աստուածաշունչին մէջ, և ձրդ համարն ընդօրինակեցեք մինչև «սէրը չնախանձիր» բառերը:

Ուրբաթ

Կաւ սորվեցեք և զիմացի էջին պատկերին տակ գրեցեք Ոսկեղէն համարը, զոր երէկ ընդօրինակեցիք:

Շաբաթ

Կարգացեք Ծննդոց Դ. 9-12: Ցաւալի՛ն պատմութիւն այն ընթացքին, որով զաւակ մը եղծեց իր տունը և վշտացուց իր հայրն ու մայրը: Էջ 18ի վրայ կարգացեք քանի մը կանոններ, որոնք շատ երջանիկ տեղ մը կը դարձնեն տունը, և թէ՛ հոն զըտնուող ամէն անձ հնազանդի անոնց: Կարգացեք էջ 19ի աղօթկարդը և ձեր աղօթքն ըրէք զայն ձեր տան համար: Յիշեցեք միշտ թէ «երկայնամիտ մարդը հօր մարդէն աղէկ է, «Ու իր ոգին զսպողը՝ քաղաք անտղէն»: Առակ. Ժ. 2. 32:


Կիրակի

Կարգացեք Ծննդոց Դ. 13-15 և ըսէք Ոսկեղէն համարը:

3968

ԿԱՅԷՆ ԵՒ ՀԱԲԷԼ

Այս պատմութիւնը կը գտնուի Ծննդոց Դ. 1-15 համարներուն մէջ:



ԵՐՋԱՆԻԿ ՏՈՒՆ ԿԱԶՄԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

Աւելցուցէք ձեր սէրը իրարու վրայ: Ա. Թեոսաղոնիկեցիս Գ. 12:

Իրարու նեղութիւնները կրեցէք: Գաղատացիս Զ. 22:

Յօժարութեամբ ծառայելով: Եփեսացիս Զ. 7:

Չհեղզանաք: Եբրայեցիս Զ. 12:

Յօժարիք ու հնազանդիք: Եսայի Ա. 19:

Ինչ որ կ'ընէք՝ սրտանց ըրէք, որպէս թէ Տէրոջը: Կոլոսացիս Գ. 23:

Ամէն բան առանց արտունջներու ու վիճաբանութիւններու ըրէք: Փիլիպպեցիս Բ. 14:

Բաւական սեպեցէք որչափ բան որ ձեռքերնիդ կայ: Եբրայեցիս ԺԳ. 5:

Ուրախ սիրտը դեղի պէս օգտակար է: Առակաց ԺԷ. 22:

Ձեր առաջնորդներուն մտիկ ըրէք ու անոնց հնազանդ կեցէք: Եբրայեցիս ԺԳ. 17:

Ինչ լեզուդ չարութենէ պահէ,

Ու չրթունքներդ՝ նենդութիւն խօսելէ: Սաղ. 1Գ. 13:

Աղօթք ըրէք իրարու համար: Յակորոս Ե. 16:

ՕՐՇՆԷ ՏՈՒՆ ՄԵՐ ԽՈՆԱՐՇ

Ե Ր Գ

Տէր, օրհնէ տուն մեր խոնարհ՝

Պայծառ լոյսով սիրոյ,

Տէր, օրհնէ մեր մանուկներ

Զըւարթ, բարեբարոյ:

Տէր, օրհնէ մայրն անուշիկ,

Օրհնէ հայրը բարի,

Ամէնս ըլլանք միշտ ազնիւ,

Սիրող, անկեղծ, արի:

Դ ա ա Զ. — ՔԱՂՈՒԱԾ

ԶԵՐ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Նայեցէք հետեւեալ բաներէն քանին կրնաք ընել այս շաբթու՝ առանց նախորդ դասերուն կամ Աստուածաշունչին նայելու :

Երկու բարբի

Աշխարհս ո՞վ և ե՞րբ ստեղծեց, կ'ըսէ վեց բառով համար մը :

Երեք բարբի

Աշխարհի ստեղծման պատմութիւնն ըրէք մայրին կամ հայրին կամ տան ուրիշ մէկ անդամին :

Չորեք բարբի

Ադամ և Եւա ինչո՞ւ ջանացին պահուիլ Աստուծոյ : Ի՞նչ ընելու էին անոնք :

Հինգ բարբի

Էջ 18ի վրայ սպուած համարներէն ո՞րն ամէնէն աւելի կը սիրէք և ինչո՞ւ : Ըսէք համար մը որ կը պատմէ թէ ի՞նչ կ'ընէր Ադամ պարտեզին մէջ : Ըսէք սիրոյ վրայ համար մը :

Ուրբաք

Կայէնի և Հաբէլի պատմութիւնն ըսէք և սիրոյ վերաբերեալ համարը գրեցէք :


Շաբաթ

Երբ մարդիկ հետզհետէ շատցան երկրի վրայ, ուրիշ միջոցներ դասն մարմնի և մարքի Աստուածապարգև ոյժերը գործածելու : Մարդ մը ամէն տեսակ արջառ պահող եղաւ փոխանակ Հաբէլի նման լոկ ոչխար պահելու : Այդ մարդը՝ ուր որ գնաց՝ իր հետ տարաւ վրանը և անոր մէջ բնակեցաւ : Այսպէս հայրը եղաւ բոլոր անոնց որ վրանի մէջ կը բնակին ու տեղէ տեղ կը փոխադրուին, այժմու գնչուներուն նման, հաստատուն բնակավայր չունենալով : Կարգացէք Ծննդոց Դ. 20 :

Կիրակի

Կայէնի սերունդէն ոմանք ըսկըսան երկրը փորել և մետաղներով զորս կը գանէին՝ ամէն տեսակ գործիք շինել : Կարգացէք Ծննդոց Դ. 22 : Կարեցէք այս դասին պատկերը, փակցուցէք դիմացի էջին վրայ և տակը գրեցէք անունն այն մարդուն որ երաժշտական գործիքներ հնարեց : Պիտի գտնէք զայն Ծննդոց Դ. 21ի մէջ :

ՔԱՂՈՒԱԾ



Դաս Է. — ՏԱՊԱՆԻՆ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

ՁԵՐ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Երկու շաբթի

Կարդացէք ինչ որ Նոյի վրայ կ'ըսուի Ծննդոց 2. 9ի մէջ, նաև ինչ որ միւս մարդոց վրայ կ'ըսուի Ծննդոց 2. 5ի մէջ:

Յոթ շաբթի

Կարդացէք Նոյի տրուած պատուէրը Ծննդոց 2. 14-16 համարներուն մէջ: Բացէք այս գիրքին 24րդ էջը և պարապ միջոցներուն մէջ գրեցէք ուզուած բառերը: Եթէ չէք գիտեր անունները գիրքերուն, որոնցմէ տունուած են ձեր Ոսկեղէն համարները, կրնաք բանալ դասերը և գտնել անունները:

Չորս շաբթի

Ծննդոց 2. 17ի մէջ կարդացէք ինչ որ Տէրը Նոյի ըսուած թէ պիտի բերէր երկրի վրայ:

Հինգ շաբթի

Կարդացէք Ծննդոց 2. 18-20 և Է. 13 համարները, և համրեցէք թէ քանի անձեր ազատուեցան տապանով:

Ուրբաթ

Որովհետև Նոյ և իր ընտանիքը, կենդանիներն ու թռչունները, տապանին մէջ պիտի մնային ժամանակ մը, հարկ էր որ ամէնն ալ իրենց յարմար կերակուրն ունենան: Կարդացէք ինչ որ այս մասին կ'ըսուի Ծննդոց 2. 21ի մէջ:

Շաբաթ


Կարեցէք այս դասին պատկերը և փակցուցէք զիմացի էջին վրայ: Նայեցէք համարներուն զորս այս շաբթու կարդացիք, և տեսէք թէ ո՞ր երեքը կը պատմեն պատկերով նկարուածը: Յետոյ այդ համարներուն թիւը զրէք պատկերին տակ տպուած վկայութեան քով:

Կիրակի

Ծննդոց 2. 22ը կարդացէք, սորվեցէք և ընդօրինակեցէք պատկերին տակ գտնուող տողերուն վրայ: Կարդացէք էջ 25ի ոտանաւորը:

ՏԱՊԱՆԻՆ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

Այս պատմութիւնը կը գտնուի Ծննդոց 2. 5.—Է. 5ի մէջ:



Ծննդոց 2.

Այս գիրքը կարդալէս ի վեր Ոսկեղէն

Համար սորված եմ:

Անոնք կը գտնուին Աստուածաշունչի տար-

բեր գիրքերու մէջ:

Ահաւասիկ գիրքերուն անունները:

ՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ՇՆՈՐՀՔԸ

Գիտունները իմաստութիւն կը բերեն,
Իսկ հարուստներ կրնան բերել շատ դանձեր-
Փառք, մեծութիւն բերողներ կան զերդ նըւէր,
Ոյժ և կորով ուրիշներէ նըւէր են:
Մենք, մանուկներս, մենք ալ բերենք գանձը մեր,
Մատուցանել թագաւորին երկնաւոր:
Հարրատութիւն ուսում և ոյժ չունինք որ,
Մանուկներս ի՞նչ կրնանք բերել իբր նըւէր:

Մենք կը բերենք մեր գործերը օրական,
Կատարելով զանոնք սիրով մեր բոլոր,
Եւ կը ջանանք հաճոյք առթել միշտ անոր,
Տունը, դպրոցն ու խաղի մէջ զուարթ այնքան:
Բայց մեր գանձեր լաւագոյն են ու յարմար
Տալու համար թագաւորին երկնաւոր:
Անոնցմէ զատ ճոխագոյն գանձ մը կա՞յ որ,
Մանուկներ, զայն մատուցանենք միշտ և յար:

Դ ա ս Ը. — ԶՐՀԵՂԵՂԸ ԵՒ ԾԻԱԾԱՆԸ

ՋԵՐ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Ներկուցաբքի

Նոյ տապանէն ի՞նչ արձակեց
երբ անձրեւը դադրեցաւ և ջուրերն
սկսան ցածնալ: Կարդացէք Ծ՛ննդոց
Ը. 6-9:

Նրեբաբքի

Երբ երկրորդ անգամ արձակ-
ուեցաւ աղաւնին, Նոյի ի՞նչ բերաւ
որ որոշ կը ցուցնէր թէ ջուրերը քիչ-
ցած էին: Ի՞նչ ըրաւ երրորդ ան-
գամ: Կարդացէք Ծ՛ննդոց Ը. 10-12:

Չորեբաբքի

Ծ՛ննդոց Ը. 13-19 ի մէջ կը
պատմուի մարդոց և անասուններու
արձակումը տապանէն: Համար 13 ի
մէջ յիշուած վեց հարիւր մէկ տա-
րին աշխարհի տարիքը չցուցնէր, այլ
Նոյի, ինչպէս կը հասկցուի Ծ՛ննդոց
Է. 6 համարէն:

Հինգեբաբքի

Տապանէն ելլելէ ետև Նոյի ա-
ռաջին գործն եղաւ գոհաբանութեան
և չնորհակարութեան ողջակէզ մա-
տուցանել Աստուծոյ: Կարդացէք
Ծ՛ննդոց Ը. 20:

Ուրբաբ

Հաստատեցէք պատկերը դիմա-
ցի էջին վրայ: Կարդացէք Ծ՛ննդոց
Թ. 12, 13 համարները և սորվեցէք
13 համարը:

Շաբաբ


Կարդացէք Ծ՛ննդոց Թ. 14-17
համարները, և թուղթի վրայ գրեցէք
Ոսկեղէն համարը զոր սորվեցաք,
փոյթ տանելով որ ուղիղ հեգէք
բառերը:

Կիրակի

Պատկերին տակ ընդօրինակեցէք
Ոսկեղէն համարը զոր ուրբաթ սոր-
վեցաք:

ԶՐՀԵՂԵՂԸ ԵՒ ԾԻԱԾԱՆԸ

Այս պատմութիւնը կը գտնուի Ծննդոց է. 6 — Ը. 22 ի եւ Թ. 12-17 ի մեջ:



Դաս Թ.— ԱԲՐԱՄԻ ԿՈՉԸ

ՈՍԿԵՂԷՆ ՀՍՄՍՐ.— Հաւատքով Աբրահամ, երբ կանչուեցաւ, մտիկ ըրաւ. և ելաւ զնաց, ու չէր գիտեր թէ ո՛ւր կ'երթայ: Եբր. ԺԱ. 8ա, գ:

ՁԵՐ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Երկուցաբքի

Գտէք Ծննդոց ԺԱ. 31, 32ի մէջ անուաներն այն անձերուն զորս Թարա իր հետ առաւ, երբ Ուրէ մեկնեցաւ Քանանու երկիրն երթալու յուսով, նաև անուան այն տեղին ուր զնաց ու մեռաւ, և տարիքը որու մէջ մեռաւ:

Երեքաբքի

Ծննդոց ԺԲ. 1-3ի մէջ կը գրուենք պատուէր մը և խոստում մը, զոր Աբրամ լսելով երկար ճամբորդութիւն մը ըրաւ, առանց գիտնալու թէ ո՛րչափ պիտի տեւեր և ո՛ւր պիտի վերջանար:

Չորեքաբքի

Հաստատեցէք այս դասին պատկերն իր տեղը: Կարդացէք Յակ.

Բ. 23 և առաջին տողին վրայ գրեցէք այդ համարին վերջին չորս բառերը: Այդ է գեղեցիկ այն անունը, զոր Աբրամ ստացաւ իր սիրալիր հնազանդութեամբ և առ Աստուած հաւատքով:

Հինգաբքի

Կարդացէք Ծննդոց ԺԲ. 4, 5 համարները և սորվեցէք այս էջին գլուխը տեսնուող Ոսկեղէն համարը:

Ուրբաք

Ծննդոց ԺԲ. 6, 7 համարներուն մէջ կը պատմուի թէ ի՞նչ պատահեցաւ Սիւքէմի մէջ:

Շաբաք

Կարդացէք Ծննդոց ԺԲ. 8, 9:

Կիրակի

Պատկերին քով ընդօրինակեցէք Ծննդոց ԺԲ. 1 համարը:

ԱԲՐԱՄԻ ԿՈՉԸ

Այս պատմութիւնը կը գտնուի Ծննդոց ԺԱ. 27—ԺԲ. 9ի մէջ

Ծննդոց ԺԲ. 1

Դաս Ժ.-ԸՆՏՐԵԼՈՒ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆԸ ՂՈՎՏԻ ՏԱԼ

ՁԵՐ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Երկու շաբթի

Կարդացե՛ք Ծննդոց ժ.Գ. 1, 2:

Երեք շաբթի

Երբ Աբ. Գիրքը մեզի կըսէ թէ Աբրամ Եգիպտոսէ դէպ ի Գանանու հարաւակողմը ելաւ, ըսել կ'ուզէ Եգիպտոսի հիւսիսակողմը: Աբրամ շարունակեց դէպ հիւսիս կրթալ մինչեւ որ հասաւ տեղ մը, ուր ինք սեղան շինած էր Եգիպտոս իջնելէն առաջ: Կարդացե՛ք Ծննդոց ժ.Գ. 3, 4:

Չորեք շաբթի

Որովհետեւ ուրիշ մարդիկ կը բնակէին երկրին մէջ և լաւագոյն արօտները կը գործածէին, և Աբրամ ու Ղովա ալ շատ արջառ ունէին, կարելի չէր ամէնուն ալ բաւող արօտ գտնել ունէ տեղ: Կարդացե՛ք Ծննդոց ժ.Գ. 5-7:

Հինգ շաբթի

Աբրամ տեսաւ թէ միայն մէկ բան կար ընելու, և Ղովտի ըսաւ

Թէ ի՞նչ ընելու են, կը խորհի ինք: Կարդացե՛ք այդ խորհուրդը Ծննդոց ժ.Գ. 8, 9ի մէջ:

Ուրբաթ

Ղովտ նայեցաւ ամէն կողմ և, տեսնելով թէ մէկ կողմի արօտը բոլոր մնացեալներէն աւելի աղէկ է, ըսաւ, «Ես Յորդանանու դաշտը կ'առնեմ»: Կարդացե՛ք Ծննդոց ժ.Գ. 10-13 համարները: Ապա պատասխան մը գտէք սա հարցման և թուղթի վրայ գրեցե՛ք՝ գալ կիրակի դպրոց տանելու համար. Ղովտի ի՞նչ կը վայելէր ընել, երբ Աբրամ անոր տուտաւ ընտրելու առաջնութիւնը:

Շաբաթ

Կարդացե՛ք Ծննդոց ժ.Գ. 18: Գտէ՛ք Ղուկ. 2. 31 համարը և թուղթի վրայ գրեցե՛ք:


Կիրակի

Սորվեցե՛ք Ղուկ. 2. 31 համարը և դիմացի էջին վրայ ընդօրինակեցե՛ք:

ԸՆՏՐԵԼՈՒ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆԸ ՂՈՎՏԻ ՏԱԼ

Այս պատմութիւնը կը գտնուի Ծննդոց ժ.Գ. 1-18ի մէջ

ՈՍԿԵՂԷՆ ԿԱՆՈՆ



Դաս ժԱ.— ԱԲՐԱՄ Կ՛ԱԶԱՏԷ ՂՈՎՏԸ

ԶԵՐ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Երկուցաբքի

Կարդացէք Ծննդոց ժ.Գ. 8, 9 համարները: Քանի մը դժուար ա- նուններ պիտի գտնէք հոն: Բայց վերջին վեց բառերը կ'ըսեն ձեզի թէ քանի՛ թագաւոր քանի՛ թագաւորի հետ պատերազմեցան:

Երեքաբքի

Կարդացէք Ծննդոց ժ.Գ. 10-12: Երբ կ'ըսուի թէ «հոն ինկան», հաւա- նորէն չուզուիր ըսել թէ Սողոմի ու Գոմորի թագաւորները մեռան նաւ- թի հորերուն մէջ, այլ թէ անոնց գորքերէն շատեր հոն մեռան:

Չորեքաբքի

Ծննդոց ժ.Գ. 13-16ի մէջ կը կարդաք թէ Աբրամ ինչ կերպով յսեց պատահածները և լսելուն պէս ինչ ըրաւ: Տեղի մը աշխարհագրա- կան գիրքին վրայ խորհելու պահուն մենք միշտ միտքով դէպ հիւսիս կ'ուղղուինք և արեւելքը մեր աջ կողմը կ'ունենանք: Աստուածաշնչա- կան ժամանակներու մարդիկ սովոր էին միշտ դէպ արեւելք ուղղուիլ:

Ուստի երբ 15 համարին բնագրին մէջ Գորայի համար կ'ըսուի թէ Գամու- կոսի ձախ կողմն էր; այդ մեզի հա- մար կը նշանակէ թէ անոր հիւսի- սակողմն էր:

Հինգաբքի

Կարդացէք Ծննդոց ժ.Գ. 18-20ի մէջ պատմութիւնը Սաղէմի թագաւորին ու քահանային, որ օրհնեց Աբրամը և որու տուաւ Աբրամ իր աւարին ստասնորդը:

Ուրբաք

Սողոմի թագաւորին հետ Աբ- րամու տեսակցութեան պատմու- թիւնը կը գտնէք Ծննդոց ժ.Գ. 17, 21-24 համարներուն մէջ:

Շաբաք


Կարդացէք, ընդօրինակեցէք ու սորվեցէք Առակաց ժ.Գ. 17 համարը:

Կիրակի

Դիմացի էջին վրայ գրեցէք այն համարը զոր երէկ սորվեցաք: Կար- դացէք էջ 34ի վրայ երեցող երգերը կամ ստանաւորները և գրեցէք ինչ որ կը պահանջուի էջ 35ի վրայ:

ԱԲՐԱՄ Կ՛ԱԶԱՏԷ ՂՈՎՏԸ

Այս պատմութիւնը կը գտնուի Ծննդոց ժ.Գ. 1-24ի մեջ:



Առակաց ժ.Գ. 17

ՍԻՐՈՅ ԿԱՆՈՆ

Ըրէ ի՛նչ լաւ բան որ կրնաս,
 Ամէն միջոցով որ կրնաս,
 Ամէն ի՛նչ կերպով որ կրնաս,
 Ամէն ս՛էր որ երբեք կրնաս,
 Ամէն ժամանակ որ կրնաս,
 Ամէն ի՛նչ մարդու որ կրնաս,
 Յորչափ ժամանակ որ կրնաս:

ձ. ՈՒԷՍԼԻ

ԱՆՁՆՈՒԻՐՈՒԹԻՒՆ

Տէր Յիսուսի ի՛նչ նուիրեմ,
 Որ զինքն ինձի սուտու.
 Իմ սէրըս ի՛նչպէս ցուցընեմ,
 Որ ինքն իմ տեղս մեռաւ:

Սիրաս Յիսուսի կը նուիրեմ
 Մանկութենէս ի վեր.
 Նըւստս ընծաս, ես լաւ գիտեմ,
 Ի՞նչու ինք չանարգեր:

Հոգիս Տէր Յիսուսի կու տամ.
 Կարող է փրկելու
 Եւ պահելու, մինչ ես երթամ
 Երեսը տեսնելու:


Իմ միտքըս տամ Տէր Յիսուսին,
 Ետըր իմ խորհուրդներս,
 Անոր ճշմարտութեան խօսքին
 Նըւիրելով ժամերս:

Իմ ժամանակս տամ Յիսուսին,
 Իրեն հետեւելով.
 Ո՛չ թէ բոլոր օրերս լեցուին
 Սուրբ, օգտակար գործով:

Իմ ըստացուածքըս նըւիրեմ
 Ինչ, Տէր Յիսուս, շատ չէ.
 Սակայն ինչ որ ունիմ և եմ,
 Ընդունելով օրհնէ:

(362 Երգ, Հոգևոր Երգարան)

ՔԱՂՈՒԱԾ



Ուրիշներ որ Աստուծոյ հետ քաղեցին



ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ԳԲ. Հ. ԳԱՆՈՒՍԵԱՆ

Աբ. Ծընունդի տօն է այսօր.
Կ'ուրախանան տրղաք բողբո,
Ձի այս տօնն է տօն մանկութեան.
Մանկութեան փա՛ռք միշտ յաւիտեան:

Այսօր ծընաւ մանկիկն Յիսուս.
Ուրախութիւն մեզ ամէնուս.
Փրկիչն եղաւ Ան՝ մարդկութեան.
Անոր անուան փա՛ռք յաւիտեան:

Աբ. Ծընունդի տօնը այսպէս
Կը տօնուի միշտ մեծահանդէս
Իբրև մեծ տօն մ'ուրախութեան.
Այս մեծ տօնին փա՛ռք յաւիտեան:

Օ՛ն, մանուկներ, այսօր դուք ալ
Պանծացուցէք Մանկիկն օրհնեալ,
Որ բացաւ դուռն եղբայրութեան.
Աբ. Ծընունդին փա՛ռք յաւիտեան:



16

24 D

165200

« Ազգային գրադարան »



NL0025971

2013

